ԿԱՐԵՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԸ ԵՎ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1917թ. ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի ղեկավարությամբ ամերիկյան վարչակազմը որդեգրեց «համաշխարհային առաջատարության» հասնելու քաղաքականությունը: ԱՄՆ նոր քաղաքականության հստակ ծրագիրը 1918թ. հունվարի 8-ին Վիլսոնը ներկայացրեց Կոնգրեսին՝ իր հանրահայտ «տասնչորս կետերի» տեսքով[1]: Այն իրենից ներկայացնում էր Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո խաղաղության հաստատման պայմանները[2]:

1918թ. նոյեմբերի 18-ին Կոնգրեսին ներկայացված իր ամենամյա ուղերձում նախագահ Վիլսոնը հայտարարեց Փարիզ մեկնելու իր մտադրության մասին՝ Խաղաղության կոնֆերանսին անձամբ մասնակցելու նպատակով[3]: Վիլսոնի այս որոշումը վրդովմունքի առիթ հանդիսացավ օրենսդիրների շրջանակներում, քանի որ իր ողջ պատմության ընթացքում ԱՄՆ նախագահը երբևիցէ չէր մեկնել օվկիանոսից այն կողմ: Պատճառը ոչ միայն ձևավորված ավանդույթն էր, այլև այն հանգամանքը, որ ԱՄՆ սահմանադրության համաձայն, տասնօրյա ժամկետում Կոնգրեսի կողմից ընդունված օրինագծերը պետք է հաստատվեն կամ մերժվեն նախագահի կողմից: Հակառակ դեպքում, նախագահի կողմից պարտավորությունների կատարելու անհնարինության պարագայում, ԱՄՆ նախագահի պաշտոնը զբաղեցնում էր փոխնախագահը: Վիլսոնի հակառակորդները պնդում էին, որ նախագահի Փարիզում գտնվելը հավասարազոր է պաշտոնից հրաժարման, քանզի վերջինս չի կարողանա այդ ընթացքում կատարել իր պարտավորությունները Վաշինգտոնում[4]: 1918թ. դեկտեմբերի 3-ին սենատոր Լորենս Շերմանը նույնիսկ Սենատի քննարկմանը ներկայացրեց բանաձևի նախագիծ, համաձայն որի ԱՄՆ նախագահի պաշտոնը հայտարարվում էր թափուր վերջինիս Եվրոպա մեկնելուց հետո, և ողջ գործադիր իշխանությունը երկրում պետք է անցներ փոխնախագահին: Բանաձևի նմանատիպ մի նախագիծ ներկայացվեց նաև Ներկայացուցիչների պալատում[5]:

Սակայն դեպքերի նման ընթացքը կարծես թե չէր անհանգստացնում Վիլսոնին, նա տարված էր իր ծրագրի և նպատակների իրականացմամբ, մասնավորապես, հետպատերազմյան խաղաղության հաստատմամբ: Պատվի-

[1] Н.В.Сивачев, Е.Ф.Язьков, Новейшая история США 1917-1972 гг., М., 1972, с.6.
[2] В.И.Лан, США от первой до второй мировой войны, М., 1976. с.44.
[3] Э.А.Иванян, Белый дом: президенты и политика, М., 1979, с.64.
[4] В.И.Лан,Указ.соч., с.55-56.
[5] Э.А.Иванян, Указ.соч., с.65.

ռակության կազմում ընդգրկելով երեք դեմոկրատների՝ պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, գնդապետ Էդուարդ Հաուզին, գեներալ Թեքեր Բլիսսին և մեկ հանրապետական՝ Ֆրանսիայում ԱՄՆ-ի նախկին դեսպան Ուայթին, 1918թ. դեկտեմբերի 4-ին նա Նյու Յորքից ուղևորվեց դեպի Եվրոպա՝ «Ջորջ Վաշինգտոն» նավով: Վիլսոնը ժամանեց Փարիզ դեկտեմբերի 14-ի առավոտյան[6]:

1918թ. հունվարի 18-ին Փարիզում հավաքվեց Առաջին համաշխարհային պատերազմում հաղթող տերությունների ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովը՝ մշակելու համար պարտված պետությունների հետ կնքվելիք հաշտության պայմանագրերը: Քննարկումների ընթացքում հետպատերազմյան խաղաղության հաստատման վիճելի հիմնական հարցերը համաձայնեցնելու նպատակով կազմավորվեց «Տասի խորհուրդը»՝ կազմված Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի վարչապետներից և արտգործնախարարներից, ԱՄՆ-ի նախագահից և պետքարտուղարից: Այնուհետև խորհրդի կազմը կրճատվեց մինչև հիգ անդամների, իսկ Ճապոնիայի ներկայացուցչի բացակայության պատճառով այն կոչվեց «Չորսի խորհուրդ» /մեծ քառյակը/, որի նիստերն ու քննարկումները հիմնականում տեղի էին ունենում գաղտնի /Վուդրո Վիլսոն՝ ԱՄՆ, Լլոյդ Ջորջ՝ Անգլիա, ժորժ Կլեմանսո՝ Ֆրանսիա, Վիտտորիո Օռլանդո՝ Իտալիա/[7]:

Հանձնաժողովի հիմնական քննարկման թեմաներից մեկը դարձավ Ազգերի Լիգայի ստեղծման գաղափարը, մի կազմակերպություն, որը պետք է զբաղվեր հետպատերազմյան խաղաղության պահպանմամբ: Նմանատիպ մի միջազգային կառույցի ստեղծման գաղափարը պատերազմի ընթացքում, որը պետք է կարողանար կանխել նախադեպը չունեցող աղետի կրկնումը, այն օրերին սկսում էր լայն տարածում ստանալ: 1917թ. գարնանը Անգլիայի կայսերական ռազմական կաբինետի առաջին իսկ նիստում հարց բարձրացվեց Ազգերի Լիգայի ստեղծման վերաբերյալ, այնուհետև 1918թ. կազմավորվեց Ֆիլիմորի հանձնաժողովը՝ Լորդ Ֆիլիմորի գլխավորությամբ /Լորդ Ֆիլիմորը Անգլիայի գերագույն դատարանի անդամներից էր/, որը պետք է զբաղվեր նման կառույցի ստեղծմամբ: Դեռևս 1917թ. հունիսի 5-ին /պատերազմի ավարտից ավելի քան մեկ տարի առաջ/ Ֆրանսիական դեպուտատների պալատում ընդունվեց բանաձև Ազգերի Լիգայի վերաբերյալ, որը պետք է ապահովեր մեծ ու փոքր պետությունների անկախությունը և խաղաղությունը՝ նրանց հավասարապես միավորելով այդ կազմակերպության մեջ: Արդյունքում Ֆրանսիայում ստեղծվեց հանձնաժողով՝ նախկին վարչապետ Լեոն Բուրժուայի գլխավորությամբ[8]:

Եվ այս ամենի առկայության պայմաններում, ըստ էության, դաշնային երկրների ղեկավարները դեռևս չէին պատկերացնում, թե նմանատիպ նախա-

---

[6] В.И.Лан,Указ.соч., с.56.
[7] В.И.Лан,Указ.соч., с. 60.
[8] Л.Джордж, Правда о мирных договорах, т.I, М., 1957, с.517

գիծն ինչպես պետք է իրականանա[9]: Նույնիսկ նախագահ Վիլսոնը 1917թ. վերջին հստակ պտկերացում չուներ միջազգային վեճերը հարթելու նման մշտական կազմակերպության բնույթի վերաբերյալ: Այդ մասին հայտարարել է գնդապետ Հաուզը Վաշինգտոնում Անգլիայի ներկայացուցչին, ասելով, որ նախագահի /Վուդրո Վիլսոնի/ կարծիքով, ԱՄՆ կառավարությունը ոչ մի դեպքում չպետք է առնչվի Ազգերի Լիգայի կազմավորման վերաբերյալ նախապես մշակված որևէ ծրագրի հետ և, որ նախագահն ու անձամբ ինքը դեռևս չեն խրախուսում ԱՄՆ-ում Ազգերի Լիգայի վերաբերյալ քննարկումները[10]:

Սակայն արդեն 1918թ. հունվարին, ներկայացնելով իր «տասնչորս կետերը», Վիլսոնը նշում էր, որ հատուկ համաձայնությամբ պետք է կազմավորվի ազգերի համընդհանուր ընկերակցություն, ինչպես մեծ, այնպես էլ փոքր երկրներին քաղաքական անկախության և տարածքային ամբողջականության փոխադարձ և միակողմանի երաշխիքների տրամադրման նպատակով: Նախագահ Վիլսոնը համոզված էր, որ հաշտությունը պետք է լինի իր «տասնչորս կետերին» համահունչ և, որ Ազգերի Լիգայի ստեղծումը պետք է դառնար այդ բանակցությունների հիմքը, որի շուրջ պետք է ընթանայն հաշտության պայմանագրի նախապատրաստման քննարկումները[11]:

Համաժողովի սկսելուն պես Վիլսոնն անմիջապես նկատեց առկա տարաձայնություններն իր և մեծ քառյակի մյուս անդամների միջև: Ֆրանսիայի նախագահ Պուանկարեն իր բացման խոսքում պատերազմի միակ մեղավորը համարեց Գերմանիային և կոչ արեց սկսել վերջինիս ապառազմականացման և մասնատման գործընթացը[12]: Այս հարցի շուրջ ամերիկյան վարչակազմն ուներ իր սեփական դիրքորոշումը. վերջինիս շահեկան էր ԱՄՆ-ի ազդեցության ներքո գտնվող Գերմանիայի գոյությունը, որը հակակշիռ կհանդիսանար Եվրոպայում Անգլիային և Ֆրանսիային[13]:

Վիլսոնն առանձնահատուկ նշանակություն էր տալիս ևս մի հարցի: 1918թ. նոյեմբերի 30-ին Անտանտի ղեկավարները համաձայնության եկան նախնական հաշտության համաժողովի հրավիրման հարցում, ուր պետք է քննարկվեին տարածքային հարցերն ու Գերմանիայի և նրա դաշնակիցների ապառազմականացման պայմանները: Վերջնական հաշտության պայմանագիրը պետք է մշակեր նոր համաժողովը՝ մեծ տերությունների մասնակցությամբ: Սակայն Վիլսոնն այլ կարծիքի էր: Նա համոզված էր, որ եթե հետպատերազմյան խնդիրների լուծումը բաժանվի երկու փուլի, ապա կարող է վտանգվի իր նախատեսած ծրագրի իրականացումը՝ Ազգերի լիգայի ստեղծումը: Պետք է

---

[9] Там же,с 516
[10] Там же, с.517
[11] История международных отношений и внешней политики СССР. 1917-1967гг., М., 1967, т.1, с.75
[12] З.М.Гершов, Вудро Вильсон, М., 1983, с. 213
[13] Н.В.Сивачева, Е.Ф.Языков, Указ.соч., с. 6.

լինի միայն մեկ համաժողով, հայտարարում էր Վիլսոնը:[14] Ժամանելով Փարիզ, նա հայտնեց իր մտադրության մասին՝ Ազգերի Լիգան դարձնել ծրագրի հիմնական մասը: Մեկ համաժողովով բոլոր հարցերը լուծելու Վիլսոնի շահագրգռվածությունը պայմանավորված էր նրանով, որ երկուսի պարագայում նա ստիպված կլիներ սենատի հաստատմանը ներկայացնել երկու փաստաթուղթ, որոնցից մեկը կվերաբերեր Ազգերի Լիգային: Այս դեպքում մեծանում էր այդ փաստաթուղթը չվավերացնելու հավանականությունը: Չգտնելով խուսափել դեպքերի նմանատիպ զարգացումից, Վիլսոնը ցանկանում էր, որ Ազգերի Լիգայի կանոնադրությունն օրգանապես ընդգրկված լինի հաշտության պայմանագրի մեջ: Սակայն Լլոյդ Ջորջն ու Կլեմանսոն, ի տարբերություն Վիլսոնի, գտնում էին, որ գործընթացը պետք է սկսել խաղաղ կարգավորման խնդիրների լուծումից: Միայն Գերմանիայում հեղափոխական շարժումների փաստը ստիպեց նրանց հրաժարվել այդ տեսակետից, որի արդյունքում հաղթանակեց Վիլսոնի գաղափարը: Հունվարի 22-ին, «տասի խորհրդի» նիստի ժամանակ Լլոյդ Ջորջն ընթերցեց Ազգերի Լիգայի կանոնադրության վերաբերյալ բանաձևը, ըստ որի Լիգան պետք է դառնար Վերսալյան հաշտության բաղկացուցիչ մասը:[15]

Անտանտի տերությունների ղեկավարների նման զիճողությունը սակայն չէր նշանակում թողտվություն Վիլսոնի որդեգրած քաղաքականության նկատմամբ: Ընդհակառակը, նրանց համոզմամբ , քանի դեռ ԱՄՆ նախագահը զբաղված է լինելու Ազգերի Լիգայի կանոնադրության նախագծի մշակմամբ, իրենց կհաջողվի կիսել գերմանական գաղութները: Վիլսոնից մեծ ջանքեր պահանջվեցին Անտանտի ծրագրերի ձախողման համար, որի արդյունքում Վիլսոնը նույնիսկ ընդհարվեց Լլոյդ Ջորջի և Կլեմանսոյի հետ և ինչպես նշում է գնդապետ Հաուզը՝ «դա առաջին անգամ էր, որ նախագահը կորցրեց ինքնատիրապետումը՝ վերջիններիս հետ բանակցությունների ընթացքում...»:[16]

Հունվարի 25-ին կայացավ հաշտության համաժողովի 2-րդ պլենար նիստը: Բացելով քննարկումը Վիլսոնը հայտարարեց, որ իրենք հավաքվել են այստեղ հետևյալ նպատակով՝ հետպատերազմյան խաղաղ կարգավորման և երկրագնդի վրա խաղաղության ապահովման ու պահպանման համար: Եվ Ազգերի Լիգան անհրաժեշտություն է հանդիսանում այս երկու նպատակների իրագործման համար:[17] Ամերիկյան պատվիրակության ղեկավարը շտապում էր նմանատիպ կազմակերպություն ստեղծել, քանի որ Լլոյդ Ջորջն իր հերթին առաջարկում էր Ազգերի Լիգայի ստեղծման հարցը հանձնել հատուկ հանձնաժողովի քննարկմանը, հուսալով, որ արդյունքում այդ նախագիծը հնարավոր

---

[14] Архив палковника Хауза, т 4, с 219

[15] Р.С.Бэкер, Вудро Вильсон. Мировая война. Версальский мир. М., 1923.

[16] Архив палковника Хауза, т 4, с 233

[17] Papers Relating to the Foreign Relations of the United States 1919. The Paris Peace Conference, v.3, p. 178, Wash. 1943 (Հղումն արված է՝ З.М.Гершов, Вудро Вильсон, М., 1983, с. 215-216)

կլինի անուշադրության մատնել, և իրենք կկարողանան անարգել կերպով զբաղվել հաշտության պայմանագրի վիճելի հարցերով[18]: Նրա այդ առաջարկը աջակցություն գտավ համաժողովի մասնակիցների կողմից: Նույնիսկ կասկածամիտ Կլեմանսոն հայտարարեց, որ ինքը ողջունում է Լիգայի ստեղծումը, սակայն թերահավատորեն է վերաբերվում դրան[19]:

Արդյունքում ստեղծվեց 19-ի հանձնաժողովը, որի գրեթե բոլոր անդամները, ըստ Լլոյդ Ջորջի, հանդիսանում էին Լիգայի ստեղծման մոլի ջատագովներ[20]*: Վիլսոնը ոչ միայն ընդգրկվեց այդ հանձնաժողովի կազմում, այլև գլխավորեց այն:

Ընդունելով իր գործընկերների քայլը, Վիլսոնն իր առջև նպատակ դրեց արագացնել հանձնաժողովի աշխատանքները և ամեն գնով ավարտել նախագծի մշակումը: Նա նպատակադրվել էր հանձնաժողովի աշխատանքն ավարտել փետրվարի 13-ին, որպեսզի Լիգայի կանոնադրության նախագծի քննարկումից անմիջապես հետո կարողանա այն ներկայացնել ԱՄՆ սենատի արտաքին գործերով հանձնաժողովի քննարկմանը:[21]

Վիլսոնը մեծ ուշադրություն էր հատկացնում մանդատային համակարգին, որը նախատեսում էր իրավունք տալ Ազգերի Լիգային հատկացնելու «Առաջատար ազգերին» /այսինքն՝ Անտանտի տերություններին/ Գերմանիայի նախկին գաղութները և թուրքական կայսրության տիրույթները կառավարելու մանդատը: Նախագահ Վիլսոնի կարծիքով, այն տարածքները, որ վերցվել են Գերմանիայից և Թուրքիայից, պետք է հայտարարվեն Ազգերի Լիգայի սեփականություն և դրանց ողջ հարստությունը բնականաբար պետք է հասանելի լինի Լիգայի անդամներին:[22]

Հանդես բերելով նման մոտեցում, Վիլսոնը փորձում էր կանխարգելել Անգլիայի, Ֆրանսիայի և Իտալիայի նպատակները՝ բռնազավթել նշված

---

[18] З.М.Гершов Указ.соч., с. 216

[19] Л.Джордж, Указ.соч., т. 1., с. 244.

[20] Там же, с. 246.

*Հանձնաժողովի կազմը հետևյալն էր. ԱՄՆ՝ նախագահ Վիլսոն, որը ղեկավարում էր հանձնաժողովը, և նրա խորհրդական, գնդապետ Հաուզ, Բրիտանական կայսրություն՝ արտաքին գործերի նախարարի օգնական Ռոբերտ Սեսիլ և գեներալ Յան Քրիստիան Սմետս, Ֆրանսիա՝ Լեոն Բուրժուա և Ֆ. Լարնոդ, Իտալիա՝ վարչապետ Վիտտորիո Օռլանդո և սենատոր Շալոյա, Ճապոնիա՝ նախկին արտգործնախարար Ն. Մակինո և Լոնդոնում Ճապոնիայի դեսպան Ս. Հինդա, Բելգիա՝ արտաքին գործերի նախարար Փոլ Հիմանս, Բրազիլիա՝ սենատոր Պեսսուա, Չինաստան՝ Վաշինգտոնում դեսպանորդ Վեյինգտոն Կու, Պորտուգալիա՝ Պետրոգադում նախկին դեսպանորդ Բ. Ռեյս, Սերբիա՝ Փարիզում դեսպանորդ Մ. Վենսիչ, Հունաստան՝ նախագահ Էլեֆտերիոս Վենիզելոս,Լեհաստան՝ Լեհաստանի ազգային կոմիտեի նախագահ Ռոման Դմովսկի, Ռումինիա՝ լիազոր ներկայացուցիչ Կ. Դիամանդի, Չեխոսլովակիա՝ Մինիստրների խորհրդի նախագահ Կարել Կրամարժ (Miller D.H. The Drafting of the Covenant, vol. 1, p 84. 142, Հրումը արված է՝ Р.М.Илюхина, Лига Наций 1919-1934, М., 1982, с. 58):

[21] З.М.Гершов Указ.соч.,с. 216

[22] Տես. Архив палковника Хауза, т 4, с 220

տարածքները: Պնդելով մանդատային համակարգի ձևավորման հարցում, Վիլսոնը հայտարարում էր, որ ԱՄՆ հոգ է տանելու նախկինում Գերմանիայի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ազգերի բարեկեցության մասին:

Այս պարագայում ակնհայտ էր, որ խոսքը գնում է «բաց դռների» դոկտրինայի տարածման մասին Անտանտի բոլոր տերությունների գաղութային տարածքների հանդեպ: Գաղութային հարցի նման լուծումը ձեռնտու էր ԱՄՆ-ի համար, նրա տնտեսական էքսպանսիայի տեսանկյունից, որն այդ ժամանակ հանդիսանում էր տնտեսապես ամենազարգացած տերությունը: Եվ Վիլսոնի մանդատային ծրագիրը փաստորեն բացում էր Ասիայի և Աֆրիկայի մինչ այդ փակ տարածքները Ամերիկայի առևտրի և կապիտալի համար:[23]

Կանոնադրության Վիլսոնյան նախագծի համաձայն, Ազգերի Լիգայի բոլոր անդամները ամեն տարի պետք է մասնակցեին ընդհանուր ժողովին /Ասամբլեային/ և յուրաքանչյուր երկիր պետք է ունենար 1 ձայնի իրավունք: Լիգայի խորհրդի կազմում նախատեսվում էր ընդգրկել նրա 9 անդամներին, որոնցից մշտական տեղ էին ստանում միայն հաղթող տերությունները /ԱՄՆ, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Իտալիա և Ճապոնիա/, իսկ մնացած 4 տեղերը տրվում էին մյուս պետություններին՝ փոփոխման սկզբունքով:

Փետրվարի 3-ին, քննարկելով Մեծ Բրիտանիայի ներկայացուցչի հետ կանոնադրության նախագծի վերջնական տարբերակը, Վիլսոնը համաձայնեց միավորել իր նախագիծը բրիտանականի հետ և ներկայացնել հանձնաժողովին համաձայնեցված փաստաթուղթ, որը հիմք կհանդիսանար քննարկումների համար:

Այն կետերը, որոնք համընկնում էին ամերիկյան և բրիտանական տարբերակներում չէին քննարկվում, ուշադրությունը կենտրոնանում էր միայն այն հարցերի վրա, որոնց շուրջ կար տարաձայնություն: Նման հարցերի թվին էր պատկանում փոքր երկրներին հատկացված ներկայացուցչական տեղերի քանակի խնդիրը: Բրիտանական և ամերիկյան համատեղ նախագծում դրանց թիվը հասցված էր 2-ի, սակայն փոքր երկրները հիմնվում էին Վիլսոնի առաջին, նախնական նախագծի վրա և պահանջում 4 տեղ: Արդյունքում նրանց պահանջը բավարարվեց:[24]

Վիճահարույց էր նաև Հնդկաստանում բրիտանական դոմինիոնների Ասամբլեայում ներկայացուցչության հարցը: Ի վերջո Բրիտանիայի պահանջը 6 տեղ հատկացնելու վերաբերյալ բավարարվեց /Մեծ Բրիտանիա, Կանադա, Հարավային Աֆրիկա, Ավստրալիա, Նոր Զելանդիա և Հնդկաստան/: Սակայն Վիլսոնի այս զիջումը զգալի կերպով բարդացրեց նրա վիճակը, երբ կանոնադրությունը քննարկվում էր Սենատում:

---

[23] З.М.Гершов Указ.соч., с. 217
[24] Там же, с., 217.

Չգտնելով օգտագործել այս կազմակերպությունը Գերմանիայի հետ խաղաղ պայմաններում պայքարի համար, Ֆրանսիան ցանկանում էր ստեղծել միջազգային բանակ, որը պետք է գործեր Լիգայի անմիջական հսկողության ներքո: Այդ պահանջները լուրջ վեճերի առիթ հանդիսացան և Վիլսոնը անգլիացիների հետ համատեղ հասավ դրա մերժմանը: ԱՄՆ նախագահը մերժեց նաև ճապոնիայի պահանջը կանոնադրության մեջ ռասայական հավասարության մասին կետ ներառելու վերաբերյալ, որպեսզի ճապոնական էմիգրանտները Վաշինգտոնում ստանան ամերիկացիներին հավասար իրավունքներ:

Ի վերջո գոյություն ունեցող տարածայնությունները հաղթահարվեցին և նախագիծը կարելի էր արդեն ներկայացնել հաշտության համաժողովի քննարկմանը: Նախագծի մշակման համար անհրաժեշտ եղավ 10 նիստ, որի վրա ընդհանուր առմամբ ծախսվեց 30 ժամ: Կատարված զգալի աշխատանքի համար հանձնաժողովը պարտավոր էր իր նախագահին, որն ամբողջությամբ ընկղմվել էր այդ աշխատանքի մեջ և ջանք չէր խնայում նախագիծը ժամանակին քննարկման ներկայացնելու համար[25]:

Հաշտության համաժողովի փետրվարի 14-ի հերթական պլենար նիստի ժամանակ Վիլսոնը ներկայացրեց իր գլխավորած հանձնաժողովի աշխատանքի արդյունքները: Նա մանրակրկիտ կերպով ներկայացրեց Ազգերի Լիգայի կանոնադրության նախագիծը, տալով նրա հոդվածների մեկնաբանությունները: Այնուհետև հանդես եկան հանձնաժողովի անդամները՝ Լորդ Ռոբերտ Սեսիլը /Մեծ Բրիտանիա/, Լեոն Բուրժուան /Ֆրանսիա/, Վիտտորիո Օռլանդոն /Իտալիա/, ինչպես նաև այլ երկրների ներկայացուցիչներ: Նրանք բոլորը դրական արտահայտվեցին նախագծի առնչությամբ: Ազգերի Լիգայի կանոնադրության նախագիծը արժանացավ հավանության: Իր ելույթում Վիլսոնն ասաց. «Այն ազգերը, որոնք իրար նկատմամբ անվստահություն էին տածում, այժմ կարող են ապրել որպես ընկերներ և բարեկամներ, կազմելով մեկ ընտանիք... Անվստահության և խարդավանքի շղարշն ընկավ: Մարդիկ նայում են իրար և ասում մենք եղբայրներ ենք և մեր նպատակն ընդհանուր է: Մենք առաջ չէինք գիտակցում դա, բայց այժմ մեզ դա լիովին պարզ է և ահա մեր եղբայրության և ընկերության պայմանագիրը:»[26]

Արդյո՞ք անկեղծ էր նմանատիպ հայտարարությունը: «Չորսի խորհրդի» նիստերից մեկում Կլեմանսոն, դիմելով մյուս պատվիրակությունների ղեկավարներին, ասաց. «Ես ինչ որ բան լսեցի մշտական խաղաղության մասին, որը վերջ կդնի պատերազմներին ընդմիշտ: Այստեղ եղան խաղաղության մասին շատ զրույցներ, որն ընդմիշտ վերջ կդնի պատերազմներին: Շատ կարևոր է այն, որ Դուք ասացիք պարոն նախագահ, այն ինչի մասին դուք

---

[25] Никольсон Г. Как делался мир в 1919 г. М. 1945, с. 459.

[26] Papers Relating to the Foreign Relations of the Unated States 1919. The Paris Peace Conference, v.3, p. 215, Wash. 1943 (Հղումն արված է՝ Э.М.Гершов, Вудро Вильсон, М., 1983, с. 218-219)

այդքան շատ էիք խոսում»,- շարունակեց Կլեմանսոն՝ իր խոսքն ուղղելով Վիլսոնին:- «Հաշվե՞լ եք արդյոք Դուք նմանատիպ խաղաղության գինը: Եթե մենք այլևս պատերազմներ չվարենք, եթե մենք դրանք թույլ չտանք, մենք ստիպված կլինենք հրաժարվել մեր կայսրություններից և դրանց պահպանման որևէ հույսից: Դուք, պարոն Լլոյդ Ջորջ, ստիպված կլինեք հեռանալ օրինակ Հնդկաստանից, մենք, ֆրանսիացիներս՝ հյուսիսային Աֆրիկայից, դուք, ամերիկացիներդ՝ Ֆիլիպինոներից և Պուերտո Ռիկոյից և հանգիստ թողնել Կուբային և Մեքսիկային: Այո՛, մենք բոլորս կարող ենք այցելել այդ երկրները որպես տուրիստներ... Մենք՝ ֆրանսիացիներս, պատրաստ ենք, իսկ դուք պատրաստ եք վճարել այդ արժեքը»: Կլեմանսոյի այս խոսքերից հետո, պատահական չէր, որ Վիլսոնը և նրա հետ միասին Լլոյդ Ջորջն ու Օռլանդոն հայտարարեցին, որ չեն ցանկանում հրաժարվել իրենց պատկանող տիրույթներից և առավելություններից: «Այդ դեպքում դուք ի նկատի ունեք ոչ թե՛ խաղաղություն, այլ պատերազմ»,- իր խոսքն ավարտեց Կլեմանսոն:[27]

Ազգերի Լիգայի կանոնադրության նախագծին հավանություն տալու հաջորդ օրը՝ փետրվարի 15-ին, Վիլսոնը մեկնեց ԱՄՆ՝ սենատի արտաքին գործերով հանձնաժողովին Լիգայի կանոնադրության նախագիծը ներկայացնելու նպատակով:

Փետրվարի 26-ին Վիլսոնը հրավիրեց սենատի և ներկայացուցիչների պալատի արտաքին գործերով հանձնաժողովների անդամներին՝ ծանոթացնելու նրանց «Ազգերի համընդհանուր ասոցիացիայի» /Ազգերի Լիգայի/ գործունեության նախագծին: Սենատորների շրջանակներում ձևավորվեց ընդհմադիր խումբ, որի հայացքները ներկայացրեց սենատի արտաքին գործերով հանձնաժողովի նախագահ Հենրի Քեբոթ Լոդջը: Վերջիններս առարկեցին ԱՄՆ-ի մասնակցությանը նմանատիպ կառույցին[28]: Լոդջը հունվարի 28-ի իր ելույթում սուր քննադատության ենթարկեց Լիգայի կանոնադրության նախագիծը: Լոդջի քննադատության առանցքը եղավ կանոնադրության տասներորդ հոդվածը[29]: Վերջինիս կարծիքով, այդ հոդվածը նախատեսում էր, ըստ էության, ԱՄՆ-ի ոստիկանական ֆունկցիաների իրականացում ողջ աշխարհում, այն լեգալացնում էր ԱՄՆ-ի ռազմական միջամտության հնարավորությունը ամերիկյան ափերից հեռու գտնվող ռազմական կոնֆլիկտներին, ինչը, ըստ նրա,

---

[27] Steffens L. The Autobiography of Lincoln Steffens. New York, 1931, p. 781-782. (Հղումն արված է՝ З.М.Гершов, Вудро Вильсон, М., 1983, с. 220)

[28] В.И.Лан,Указ.соч., с. 65.

[29] Հղված 10, ԱՐՏԱՔԻՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆ- Լիգայի անդամները պարտավորվում են հարգել և պաշտպանել արտաքին ագրեսիայից Լիգայի անդամ երկրների տարածքային անձեռնմխելիությունը և գոյություն ունեցող քաղաքական անկախությունը: Նմանատիպ ագրեսիայի կամ ագրեսիայի հասունացած վտանգի դեպքում խորհուրդը պետք է առաջարկի միջոցառումներ, որոնք թույլ կտան ի կատար ածելու վերոնշյալ պարտավորությունները: Տես՝ А.Джордж, Указ.соч., т. 1., с. 543.

չափազանց վտանգավոր էր երկրի համար, քանզի վերջինս կարող էր դրա արդյունքում ներքաշվել իր շահերին չառնչվող կոնֆլիկտների մեջ[30]:

Փետրվարի 3-ին, Վիլսոնի Ֆրանսիա մեկնելու նախորդ օրը, Լոդջը հրապարակեց 37 սենատորների /դա այն թիվն էր, որը կազմում էր այն ժամանակվա 96 սենատորների մեկ երրորդից ավելին, իսկ վավերացման համար անհրաժեշտ էր սենատորների թվի երկու երրորդի համաձայնությունը/ կողմից ստորագրված բանաձև այն մասին, որ նրանք չեն քվեարկելու Ազգերի Լիգայի օգտին այն տեսքով, որով այն ներկայացվել է նախագահի կողմից և պահանջում են, որ Լիգայի հարցը վերանայվի առանձին՝ հաշտության պայմանագրի ստորագրումից հետո[31]:

Սակայն դեպքերի նման ընթացքը չհիասթափեցրեց Վիլսոնին: Գնդապետ Հաուզին ուղղված մարտի 4-ի հեռագրում Վիլսոնը վստահություն էր հայտնում, որ անկասկած Միացյալ Նահանգների ազգաբնակչության ճնշող մեծամասնությունը կողմ է Ազգերի Լիգային[32]: Վիլսոնը հույս ուներ կոտրել Լոդջի ընդդիմությունը: Միևնույն ժամանակ ընդունելով նախկին նախագահ Տաֆտի և նախկին պետքարտուղար Ռութի խորհրդը Վիլսոնը որոշակի շտկումներ կատարեց Լիգայի կանոնադրության նախագծում, որոնք վերաբերում էին Լիգայի կազմից դուրս գալու իրավունքին, ինչպես նաև ԱՄՆ-ի կողմից «Մոնրոյի դոկտրինայից» բխող իրավունքների և շահերի պահպանմանը[33]:

Մարտի 14-ին Վիլսոնը վերադարձավ Փարիզ, ուր մնաց շուրջ մեկ ամիս: Այդ ընթացքում Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների կողմից փորձ արվեց առանձնացնել Ազգերի լիգայի հարցը հաշտության պայմանագրից: Հաուզն ու Լանսինգը արդեն հաշտվել էին այդ առաջարկի հետ: Սակայն Վիլսոնն այս հարցում ցուցաբերեց անկոտրուն կամք, նույնիսկ սպառնաց լքել կոնֆերանսը և հրաման արձակեց նախապատրաստել «Ջորջ Վաշինգտոն» նավը՝ Ֆրանսիայից մեկնելու համար: Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները տեղի տվեցին:

Մարտի 15-ին Վիլսոնի ցուցումով հրապարակվեց հայտարարություն այն մասին, որ 1919թ. հունվարի 25-ի պլենար նիստի ընթացքում ընդունված որոշումը հաշտության պայմանագրի մեջ Ազգերի Լիգայի ընդգրկելու մասին վերջնական է և որևէ հիմք չկա այդ որոշման մեջ փոփոխություններ կատարելու համար:[34]

ԱՄՆ մեկնելուց հետո միայն Վիլսոնը համոզվեց, որ եթե կանոնադրության մեջ չմտցնել որոշակի փոփոխություններ, այն չի վավերացվի սենատի կողմից: Որիստի նա սենատի և ներկայացուցիչների պալատի արտաքին գործե-

---

[30] А.И.Уткин, Дипломатия В.В., М1989, с. 65.
[31] В.И.Лан,Указ.соч., с. 65.
[32] Архив палковника Хауза, т 4, с 272
[33] В.И.Лан,Указ.соч., с. 65.
[34] Հղումն արված է՝ З.М.Гершов, Вудро Вильсон, М., 1983, с. 222.

որով հանձնաժողովների անդամներին խոստացավ Եվրոպա վերադառնալուն պես առաջարկվելիք փոփոխությունները ներկայացնել 19-ի հանձնաժողովի քննարկմանը[35]:

Վերադառնալով Փարիզ՝ մարտի 14-ին, Վիլսոնը ինչպես խոստացել էր, խնդրեց 19-ի հանձնաժողովի համաձայնությունը Կանոնադրության մեջ մի շարք նոր հոդվածներ ընդգրկելու կապակցությամբ: Դրանք վերաբերում էին Ազգերի Լիգայի կազմից դուրս գալու պայմանների կոնկրետացմանը, Մոնրոյի դոկտրինայից[36] բխող ԱՄՆ-ի իրավունքների և շահերի պահպանմանը, Ազգերի Լիգայի ներքաղաքական հարցերին չմիջամտելուն և մի շարք այլ հարցերի:[37]

Այսպիսով, Վիլսոնը լծվեց Կանոնադրության ճշգրտման գործին: Լուրջ վեճերի առիթ տվեց Մոնրոյի դոկտրինայի հետ կապված Վիլսոնի ուղղումը, ըստ որի ոչինչ այդ կանոնադրության մեջ չպետք է ազդեր միջազգային պարտավորությունների օրինականության վրա, ինչպիսիք են արբիտրաժային պայմանագրերը, տարածքային համաձայնագրերը, որոնք ապահովում են խաղաղության պահպանումը[38]:

Ֆրանսիան հայտարարեց, որ այդ շտկումն ԱՄՆ -ին դնում է գերակա դրության մեջ, քանզի Ազգերի Լիգան չէր կարող տարածել իր լիազորությունները Լատինական Ամերիկայի վրա, որը նախկինի պես շարունակում էր մնալ որպես ԱՄՆ-ի ազդեցության գոտի: Նրանք նույնպես պնդում էին, որ Մոնրոյի դոկտրինայից բխող հատուկ իրավասությունների պահպանումը ԱՄՆ-ի կողմից կազատեր երկիրը եվրոպական հարցերի կարգավորմանը միջամտելու պարտավորվածությունից[39]: Սակայն Վիլսոնի հաջորդ ելույթի ժամանակ Ֆրանսիան համաձայնեց այդ փոփոխությունների հետ, առաջ քաշելով նաև իր նկատմամբ զիջումներ ԱՄՆ-ի կողմից գերմանական հարցի առնչությամբ:

Մոնրոյի դոկտրինային առնչվող փոփոխությունների դեմ հանդես եկավ նաև Մեծ Բրիտանիան, որն օգտագործում էր այս հարցի շուրջ ԱՄՆ-ի հետ ծագած տարաձայնությունները՝ պահպանելու համար իր ռազմա-ծովային առավելությունը: Երկար բանակցություններից հետո կողմերն ի վերջո եկան փոխզիջման: ԱՄՆ պատրաստակամություն հայտնեց ամեն տարի խորհրդակցել Մեծ Բրիտանիայի հետ նավատորմի հետագա կառուցման համար, հաշվի առնելով վերջինիս ծովային խոշոր տերության հանդիսանալու դիրքը: Մեծ

---

[35] Р.С.Бэкер, Указ.соч., с. 344-346.

[36] «Մոնրոյի դոկտրինա», ԱՄՆ-ի կառավարության արտաքին քաղաքականության ծրագիր, որը հռչակվել է 1823թ. ԱՄՆ-ի նախագահ Ջեյմս Մոնրոյի կողմից (այստեղից էլ անվանումը) կոնգրեսին հղած ուղերձի մեջ: Այն առաջ էր քաշում աշխարհը ամերիկյան և եվրոպական համակարգերի բաժանելու և փոխադարձաբար միմյանց ներքին գործերին չմիջամտելու սկզբունքերը: Տես՝ История дипломатии, под. ред. В.А. Зорина, т. 1, М., 1959, с. 521.

[37] Архив палковника Хауза, т 4, с 332

[38] Տես՝ նույն տեղում, էջ, 333

[39] З.М.Гершов, Указ.соч., с. 225.

Բրիտանիան իր կողմից հավաստիացրեց, որ կաջակցի ԱՄՆ-ին Ազգերի Լիգայի կանոնադրությունը հաշտության պայմանագրին միացնելու և նրա տեքստում Մոնրոյի դոկտրինայի կարգավիճակի վերաբերյալ կետ մտցնելու գործում[40]:

Այսպիսով, Ազգերի Լիգայի ստեղծման ճանապարհին փաստորեն բոլոր խոչընդոտները վերացված էին: Ապրիլի 28-ին կայացավ ևս մեկ պլենար նիստ, որի հիմնական զեկուցողը Վիլսոնն էր: Նա ամփոփեց հանձնաժողովում քննարկումների արդյունքները և ներկայացրեց իր մշակած կանոնադրության վերջնական տարբերակը: Արդյունքում բոլոր որոշումներն ընդունվեցին: Կազմակերպության գլխավոր քարտուղար նշանակվեց անգլիացի դիվանագետ Ջեյմս Էրիկ Դրումոնդը, ինչպես նաև որոշվեցին Խորհրդի առաջին չորս ոչ մշտական անդամները. Բելգիան, Հունաստանը, Իսպանիան և Բրազիլիան[41]:

1919թ. ապրիլի 28-ի դրությամբ Ազգերի լիգան այլևս իրողություն էր: Վիլսոնը փաստորեն հանդիսանում էր այդ կազմակերպության հիմնադիրը: Ամբողջությամբ համակված լինելով ռոմանտիկ գաղափարներով և միջպետական կոնֆլիկտների կարգավորման միանգամայն այլ պատկերացումներով, նա իր ողջ կարողությունները ներդրեց «Ազգերի Լիգա» կոչվող կառույցի ստեղծման գործում, որը նրա պատկերացմամբ, առաջին հերթին որպես միջազգային կառույց, պետք է ունենար գործնական ներդրում միջազգային հարաբերությունների կարգավորման գործում և նվազեցներ պատերազմի հավանականությունը՝ առաջնություն տալով կոնֆլիկտների լուծման խաղաղ ճանապարհներին: Լիգան և նրա կանոնադրությունը կոչված էին նաև մեծ տերությունների քաղաքականությանը տալու իրավական ուղղվածություն և մեղմացնելու հասարակական կարծիքը, որն արդեն դառնում էր կարևոր քաղաքական գործոն, հատկապես ժողովրդավարական երկրներում , որի հետ պետք էր հաշվի նստել: Այն մի փորձ էր պետություններին միավորելու ի շահ համընդհանուր խաղաղության: Մյուս կողմից երկրագնդի առավել թույլ և փոքր պետությունները Ազգերի Լիգայի հետ մեծ հույսեր էին կապում, համոզված լինելով որ այս նոր միջազգային կազմակերպությունը կպաշտպանի իրենց շահերը, թույլ չի տա ոտնահարել իրենց իրավունքները և խախտել իրենց տարածքային ամբողջականությունը:

Ազգերի լիգան շարունակեց գործել մինչ 1946թ.: Այդ կառույցի վերջին նիստը տեղի ունեցավ 1946թ. ապրիլի 18-ին Ժնևում, որի ավարտով հայտարարվեց Ազգերի Լիգայի գործունեության դադարեցումը:

---

[40] Տես՝ նույն տեղում, էջ, 225:
[41] Р.М.Илюхина, Лига Наций 1919-1934, М., 1982, с. 75.